

Թոշակառուի «ճաշը» կեփեն տարբեր «ամաններում»

Առաջ, դեպի մասնավոր ֆոնդեր



«Մենք պիտի ամբողջացնենք մասնավոր կուտակային համակարգի իրավական ամենաուշը 2013թ. կեսը»,- ասում է Հայկ Ոսկանյանը:

2014-ից սկսած՝ քաղաքացիները պարտավոր կլինեն իրենց ապագա կենսաթոշակները վստահել մասնավոր ֆոնդերի կառավարիչներին: Նոր համակարգի կամավոր կուտակային բաղադրիչի մասնակիցների համար արդեն սահմանված են հարկային արտոնություններ: Ֆոնդի կառավարչի, բանկի կամ ապահովագրական ընկերության հետ կորպորատիվ պամանագրի դեպքում գործատուն կկարողանա նվազեցնել շահութահարկի բազան յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի 5%-ի չափով: Անձնական պայմանագրի դեպքում աշխատողը կունենա նմանատիպ 5% նվազեցում եկամտահարկից: Թե ապահովության ինչպիսի միջոցներ կկիրառվեն քաղաքացիների ներդրված գումարների համար, «Կապիտալի» հետ զրույցում պատմում է NASDAQ OMX-ի Կենտրոնական դեպոզիտարիայի կենսաթոշակային համակարգի սպասարկման բաժնի պետ Հայկ Ոսկանյանը:

-Ինչպիսի՞ գործառույթներ է ստանձնելու դեպոզիտարիայի՝ Ձեր ղեկավարած բաժինը նոր կենսաթոշակային համակարգի ներքո:

-Այսօր Կենտրոնական դեպոզիտարիան հանդիսանում է արժեթղթերի կենտրոնացված պահառու, կենտրոնացված ռեեստրավար և արժեթղթերի հաշվարկային համակարգի օպերատոր: Նոր համակարգի պարտադիր կուտակային բաղադրիչի ուժի մեջ մտնելուց հետո դեպոզիտարիայի մեր բաժինը կիրականացնի նաև մասնավոր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների հաշիվների կենտրոնացված վարում և կենտրոնացված պահառության գործառույթները:

-Հիշեցրեք, թե գրանցման ինչպիսի՞ ընթացակարգեր պիտի անցնի մասնավոր կենսաթոշակային ֆոնդը:

-Ֆոնդի կառավարիչները լիցենզավորվելու են Կենտրոնական բանկում, այնուհետև նրանք կարող են գրանցել մասնավոր կենսաթոշակային ֆոնդ և առաջակել իրենց կենսաթոշակների կուտակման ծառայություններ: Ֆոնդերի գումարները կգոյանան գործատուների կողմից փոխանցվող վճարներից, որոնց համապատասխանությունը ստուգվելու է Պետեկամուտների կոմիտեում, ինչպես նաև պետության համաֆինանսավորումից, որը կփոխանցվի գանձապետարանի կողմից: Այդ գումարները կփոխանցվեն ԿԲ-ում գտնվող մեր հաշվից դեպի ֆոնդեր: Մենք ամսական կտրվածքով կստանանք տեղեկատվություն Պետական եկամուտների կոմիտեից և գանձապետարանից, որի հիման վրա թողարկելու ենք ֆոնդերի փայեր, որոնք պատկանելու են ֆոնդերի մասնակիցներին: Այդ տեղեկատվությունը մենք կստանանք ոչ թե ինքնուրույն, այլ հաշվի օպերատորների միջոցով: Սպասվում է, որ հիմնականում դրանք կլինեն բանկերը, որոնք ավելի մեծ ցանցի շնորհիվ կարող են ավելի արագ ստանալ և ուղարկել այդ տեղեկատվությունը: Բանկերն այդ գործառույթն իրականացնելու համար կօգտագործեն մեր ծրագրային համակարգը: Դրա շնորհիվ բանկերի միջոցով հնարավոր կլինի բացել թոշակային հաշիվ, ընտրել կամ փոխել ֆոնդը և ստուգել հաշվին առկա գումարի չափը, սեփական փայերի ընթացիկ եկամտաբերությունն ու արժեքը: Այդ պարամետրերի հիման վրա քաղաքացին կարող է որոշել՝ պահել ակտիվները տվյալ ֆոնդում կամ ընտրել մեկ ուրիշը: Մեր մյուս գործառույթը կլինի ակտիվների պահառությունը: Այն իրենից ներկայացնում է ակտիվների հաշվառում, պահպանում, ֆոնդի ակտիվներով կատարվող գործարքների սպասարկում: Ֆոնդի ակտիվների կազմում ցանկացած փոփոխություն կառավարիչը կկարողանա իրականացնել միայն դեպոզիտարիայի իմացությամբ, իսկ կանխիկի դեպքում՝ նաև համաձայնությամբ: Դա, բնականաբար, լուրջ երաշխիք կհանդիսանա գործառնական ռիսկերի և կեղծիքների դեմ: Պահառության առանձին և կարևոր գործառույթ է նաև ֆոնդերի սահմանաչափերի նկատմամբ հսկողության իրականացումը:

-Իսկ ի՞նչ գործառույթներ կկատարի սոցապահովության պետծառայությունը:

-Այն կշարունակի հաշվարկել քաղաքացիների թոշակի ծավալները, ստուգել թոշակի իրավունքը և կազմակերպել թոշակների վճարումը:

-Քաղաքացիների փայերի գները կարո՞ղ են նվազել ֆոնդի անհաջող գործառույթների հետևանքով:

-Հնարավոր է, որ դրանք նաև նվազեն, բայց սահմանված խիստ կարգավորման ներքո դրանք չեն կրի երկար ժամկետ: Երկարաժամկետ

կտրվածքով դա հնարավոր է միայն համակարգային խնդիրների, օրինակ՝ ճգնաժամի դեպքում: Չիլիի և այլ երկրների փորձից տեսնում ենք, որ խիստ կարգավորմամբ երկրներում այդպիսի նվազումը ողջամիտ ժամկետներում վերականգնվեց:

-Մեր ֆոնդերի առջև դրվել^ո է ներդրումների դիվերսիֆիկացիայի պահանջ և արժեթղթերի որակի շեմ:

-Պարտատոմսերի մասով կսահմանվի նվազագույն վարկանիշ, բաժնետոմսերի համար որակի չափանիշ կհանդիսանա ընկերության հաշվետվությունը և այն, թե որ բորսաներում է նա ցուցակվում: Այդ նորմերը պիտի սահմանվեն ենթաօրենսդրական ակտերով: Դրանցով էլ պիտի սահմանվեն դիվերսիֆիկացիայի նորմերը՝ ֆոնդը չի կարողանա իր միջոցների որոշակի տոկոսից բարձր (հավանաբար՝ 10%-ից ոչ ավել) ներդնել նույն ընկերության կամ փոխկապակցված անձանց պատկանող ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերում: Պետական պարտատոմսերի համար այդ շեմը, ըստ երևույթին, կսահմանվի ավելի բարձր: Այդպիսի գործելակերպ կիրառվում է արտերկրում, որպեսզի բացառվի ռիսկերի կենտրոնացումը: Տեսական դրույթները վկայում են, որ ամբողջական դիվերսիֆիկացիան կարելի է ապահովել առնվազն 30 ներդրումային գործիքի առկայության դեպքում: Իհարկե, շատ բան կախված է շուկայից, և սկզբում այդ սահմանաչափերը գուցե կլինեն փոքր-ինչ ավելի բարձր:

-Մասնավոր ֆոնդերի շուկան արդեն հասցրե՞լ է հետաքրքրել ֆինանսական կազմակերպություններին:

-Այո, հետաքրքրվածություն են ցուցաբերել մի քանի արտասահմանյան կազմակերպություններ, թեև այն փոքր-ինչ նվազել է, երբ նրանք իմացան, որ համակարգի ներդրումը կհետաձգվի մինչև 2014թ.: Տեղի բանկերի հետաքրքրվածության մասին ինձ հայտնի չէ, բայց գործող ներդրումային ընկերությունների կողմից նույնպես հետաքրքրություն կա: Ամեն դեպքում, մենք պիտի ամբողջացնենք մասնավոր կուտակային համակարգի իրավական բազան ամենաուշը մինչև 2013թ. կեսը, որպեսզի ֆոնդերի կառավարիչները ժամանակ ունենան տեղեկատվական և գովազդային արշավ սկսել, իսկ մասնակից-հաճախորդները հասցնեն ընտրություն կատարել:

-Ինչպիսի՞ այլ գործառույթներ կկատարի դեպոզիտարիան:

-Դեպոզիտարիան կկարգավորի թոշակային հաշիվների գումարների տնօրինման հարցերը, մասավորապես՝ այդ գումարների կուտակման և

Ժառանգության դեպքում: Ժառանգած գումարը հնարավոր կլինի օգտագործել կամ միանվագ, կամ կենսաթոշակային հաշվին փոխանցելու միջոցով: Եթե գումարը մեծ կլինի որոշ սահմանաչափից, այդ գումարները կփոխանցվեն ժառանգի կենսաթոշակային հաշվին: Դրանից բացի, եթե թոշակային տարիքի հասած քաղաքացին անուիտետի պայմանագիր ունենա ապահովագրական ընկերության հետ, իր փայերը կմարվեն և կփոխացվեն այդ ապահովագրական ընկերությանը՝ անուիտետային վճարումների համար: Գումարները կարող են և չհամապատասխանել անուիտետի պահանջներին, օրինակ՝ եթե գումարը փոքր լինի: Այդ դեպքում կենսաթոշակառուն գումարները կստանա ծրագրային վճարների տեսքով՝ բանկային հաշվից: Նման միջոցը կարող է օգտագործվել նաև այն դեպքում, երբ արդեն իսկ գնվել է առավելագույն սահմանված չափի անուիտետ, որն ապահովում է, օրինակ, անձի աշխատավարձի որոշակի տոկոսը: Ծրագրային վճարի միջոցով կարելի է ստանալ այդ գումարը գերազանցող մասը:

-Որքա՞ն է գնահատվում կուտակային ֆոնդերի ընդհանուր դրամագլուխը համակարգի ներդրման առաջին տարվա ավարտին:

-2014թ. վերջին կուտակված գումարը մենք գնահատում ենք շուրջ Դ25 մլրդ: Հետագայում այդ գումարը կշարունակի ավելանալ: Քանի որ պարտադիր կուտակային համակարգից կօգտվեն միայն 40 տարեկանից երիտասարդ անձինք, ապա առաջին վճարումները ֆոնդերը կսկսեն կատարել միայն 23 տարի հետո՝ չհաշված ժառանգության հետ կապված վճարումները, որոնք, բնականաբար, մեծ տոկոս չեն կազմի:

Արամ Գարեգինյան, «Կապիտալ», 30.06.2011 թ.